եթէ ոչ սատանայական թելադրութեամբ համարիմք զեղեալն՝ որ մախալով զառն մերս աղօթելոյն վասն ձեր՝ խառնեաց զորոմն չարութեան 'ի մէջ բարի սերման խաղաղութեան մերում ընդ ձերայնոց՝ եւ կամեցաւ իրաւաղուրկ առնել զմեզ, և զաղօթելն մեր վասն ձեր խափանել, և զսիրոյն օրէն ոչնչացուցանել՝ և բծախնդրութեամբ հիմնայատակ առնել, զոր չունիմք մեղադրել ումեք՝ եթէ ոչ մեզաց մերոց։ Բայց ո՞վ աստուածասէր և բարեպաշտ ծայրագոյն Դեսպան, իրաւունս 'ի քումմէ երջանկութենէ խնդրեմք, միթէ չիցէ՞ արժան քրիստոսապսակեալ թագաւորութեան Ֆրանցայու ունիլ աղօթող ոչ միայն զիւրականն ազգ, այլ և դրեթէ զամենայն ազգս օտարազնեայս, զոր ահա մեք թէպէտ ազգաւ օտար, բայց հաւատով կարի քաջ ընտանիք, և զիա՞րդ աղօթից մերոց առ ուղղափառ Կայսրն Ֆրանցայու խափան լինիցի։ ո՞չ ապաքէն և Աստուածպետութիւնն ընդունի և 'ի բերանոյ մեղաւորաց զաղերս աղօթից։ Եւ զի՞նչ պակասի 'ի փառաց Աստուածասէր թագաւորութեան նորա՝ մինչ այս խղճալի ազգս հովանաւորիցի 'ի ներքոյ շքոյ գթութեան նորա։ յիրաւի ոչ պակասի՝ քան թէ յաւելանի։ Ուրեմն եթէ ամենայն Դեսպանաց յատկութիւն իցէ՝ զաւելի ինչ քան զնախնին իւր հնարել 'ի պարծանս ինքեան և յօգնութիւն իւրական ազին, այս է ուրեմն մեծագոյնն մեծագունից։ եթէ զհիմնեալ խաղաղութիւնն մեր՝ եւ զսէրն հաստատ պահել ջանայցէ Աստուածասիրութիւնդ ընդ եղբարց մերոց, որ աստ 'ի Ս. Քաղաքս Երուսաղէմ։ Զի որպէս սրբազան Առաքեալն Պօղոս տնկեաց և Ապօղոս ջուր ետ .եւ Աստուած աճեցոյց, հաւատամք զի ոմն Աստուածասէր, այսինքն Վիլլանովայն տնկեաց զսէր 'ի մէջ երկուց ազգացս, և միւս գեր Աստուածասէրդ կամի ջրով ոռոգել, և ոչ երկբայեմք եթէ Աստուած զայնպիսի տունկն և զոռոգեալն աճեցուսցէ։ Ուստի խնդրի 'ի քումմէ ամենաբարեպաշտութենէ ստանալ զպարծանս պարծանաց զերանութիւնն խաղաղարարաց, եւ ըստ շնորհի զորդւոյ Աստուծոյ մականունութիւնն ժառանգել։ Եւ այն որո՞վ լինի ո՛վ գերապայծառ Իշխան, եթէ ոչ ունկն ոչ դնելով աւելորդաբանից զրասացութեանց, զոր ահա զստոյգն գը-